ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԼԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ,
ՌՈՒԶԱՆՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Բանալի բառեր *– Արցախ, Լեռնային Ղարաբաղ, ցեղասպան քաղաքականություն, մշակութային ցեղասպանություն, ռազմական հանցագործություն, վանդալիզմ, հրետակոծում, գլխատում, վարձկան ահաբեկիչ, էթնիկ զտում*

1918 թ. մայիսին՝ Այսրկովկասի երեք հանրապետությունների անկախության հռչակումից անմիջապես հետո, Գանձակում նորաստեղծ Ադրբեջանի կառավարության և «Մուսավաթ» կուսակցության գործիչների գաղտնի խորհրդակցության ժամանակ մշակվեցին Նուխիի, Արեշի, Գյոքչայի, Շամախիի և Բաքվի գավառների հայերի կոտորածների ծրագրեր[1]: Դրան հաջորդեց Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների հայկական 48 գյուղերի բնակչության ոչնչացումը, ընդհանուր առմամբ՝ 40.000 մարդ[2]: 1918 թ. սեպտեմբերի 15-17-ը Բաքու քաղաքում (մինչ այդ՝ Բաքվի նահանգում) թուրքական կանոնավոր բանակը և թաթարական հրոսակախմբերը շարունակեցին Արևմտյան Հայաստանում սկսված և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում իրականացված Հայոց ցեղասպանությունը[3]: Հայատյաց և ցեղասպան քաղաքականությունն իր դրսևորումն ունեցավ նաև 1920 թ. մարտի 23-26-ն ընկած ժամանակահատվածում Արցախի Շուշի քաղաքում [տե՛ս 1, 2 նկարները]: Ինչպես Արևմտյան Հայաստանում, Շուշիում ևս նախ զինաթափեցին

---

[1] Տե՛ս «Աշխատավոր», 29 մարտի 1919, **Ստեփանյան Գ.**, Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ. // Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2002, թիվ 5, էջ 25, **Գասպարյան Ռ.**, 1918 թ. Բաքվի հայերի կոտորածը որպես իրականություն. Պատմահրավական գործոններ // ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 1.4, 2019, էջ 246:

[2] Տե՛ս **Դադայան Խ. Զ.**, Հայերը և Բաքուն (1850-ական թթ. - 1920 թ.), Երևան, 2006, էջ 150, **Ստեփանյան Գ.**, Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 347, 402, 430-431:

[3] Տե՛ս **Gharibyan A.**, The Issue of Nagorno-Karabakh in 1918-1920 and Great Britain, Yerevan, 2014, p. 44:

հայերին, այնուհետև իրականացրին նրանց ջարդերը[1]: Երեք օրում ավերվել և կրակի են մատնվել 7000 տուն, մորթվել են ըստ ոմանց տեղեկությունների՝ երեքից չորս հազար, ըստ այլոց՝ 12 հազարից ավելի հայեր: 35 հազար հայերից Շուշիում ոչ ոք չէր մնացել[2]:

Փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերի կոտորածները զանգվածային և պարբերական բնույթ են կրել, որոնք շարունակվում են մինչ օրս:

Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ԱԽՍՀ) Ազգային խորհուրդը, հիմք ընդունելով Ադրբեջանի Հեղկոմի և ԱԽՍՀ ու Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՀԽՍՀ) կառավարությունների միջև կնքված համաձայնագիրը, 1921 թ. հունիսի 12-ի հռչակագրով Լեռնային Ղարաբաղը ճանաչել է ՀԽՍՀ անբաժանանելի մաս[3]: Այդուհանդերձ, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ակունքներում Ստալինի անմիջական միջամտությամբ Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան բյուրոն 1921 թ. հուլիսի 5-ին ընդունել է որոշում՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի կազմում ընդգրկելու և այդ տարածքում ինքնավար մարզ կազմավորելու վերաբերյալ: 1923 թ. հուլիսի 7-ին ԱԽՍՀ կենտրոնական գործադիր հեղափոխական կոմիտեի որոշմամբ Ղարաբաղի տարածքի մի հատվածում կազմավորվել է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ), որի բնակչության 94 տոկոսը հայեր էին[4]:

Կարծում ենք, որ թե՛ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ), թե՛ ԱԽՍՀ-ն և թե՛ ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը Հայաստանին ու հայերին վերաբերող հարցերում որդեգրել են անպատիժ մնացած Թուրքիայի ցեղասպան և հակահայ քաղաքականությունը: Ուստի քանի դեռ լիովին չի ճանաչվել ու դատապարտվել Օսմանյան կայսրության իրականացրած Հայոց ցեղասպանությունը, այդ քաղաքականությունը որևէ փոփոխության չի ենթարկվելու: Այդ մասին են վկայում 1988 թ. փետրվարի 27-29-ը Բաքվից ոչ հեռու գտնվող Սումգայիթում, 1990 թ. հունվարի 13-19-ին Բաքվում և 1992 թ. ապրիլի 10-ին Մարաղայում հայերի հանդեպ զանգվածային ջարդերը[5]: Թվարկված իրադարձությունները խաղաղ պայմաններում քաղաքացիական բնակչության նկատմամբ կիրառված հանցագործություններ են, որոնց անպատժելիությունը հանգեցրեց 2016 թ. ապրիլին Ադրբեջանի վերսկսած Քառօրյա և ավելի ուշ՝ 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսնե-

---

[1] Տե՛ս **Ղարիբյան Ա.**, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան, 2012, էջ 13:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս «Вестник архивов Армении», 1989, № 1, с. 126:

[4] Տե՛ս **Микаелян В., Хуршудян Л.**, Некоторые вопросы истории Нагорного Карабаха // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 1988, թիվ 4, էջ 43-56:

[5] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=9506&Reading=0%D5%B4%D5%A1 /01.11.2021/

ին Արցախյան 44-օրյա պատերազմների ընթացքում ռազմական հանցագործությունների իրականացմանը: Ապրիլյան պատերազմի ընթացքում Ադրբեջանն իրականացրեց պատերազմական և մարդկության դեմ ուղղված բազմաթիվ հանցագործություններ՝ մասնավորապես հայ խաղաղ բնակչության և ռազմագերիների դաժան սպանությունների, խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի բազում դեպքեր:

Ադրբեջանի Հանրապետությունն ի սկզբանե իրականացրել է վաղեմության ժամկետ չունեցող պատերազմական բնույթի հանցագործություններ, էթնիկ զտումներ, իր տարածքում և Արցախի հայաբնակ վայրերում ցեղասպան քաղաքականության դրսևորումներ:

2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Արցախում տեղի ունեցած պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերի հարձակումներն ուղեկցվել են անմարդկային և դաժան վերաբերմունքով, գլխատումներով ու խոշտանգումներով թե՛ ռազմագերիների և թե՛ քաղաքացիական գերիների նկատմամբ, որոնց մասին բազմիցս ահազանգել են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանության ներկայացուցիչները:

Թեև 2020 թ. Արցախյան պատերազմն աննախադեպ էր իր ծավալով, պատերազմական հանցագործությունների դաժանությամբ ու միջազգային մարդասիրական իրավունքի դեմ ոտնձգություններով, միևնույն ժամանակ այն Բաքվի ավելի քան մեկ դար ձգվող հայատյաց քաղաքականության արտացոլումն էր:

Կոտորածների և ամենախիստ դրսևորումներ ունեցող հակահայ քաղաքականությունը շարունակական բնույթ կրեց 1988 թվականից ի վեր, քանի որ ԼՂԻՄ-ի հարցը չլուծվեց ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքին համապատասխան: Ըստ միջազգային իրավունքի հիմնարար նորմերի՝ տարածքային ամբողջականության սկզբունքը չի կարող հակադրվել ժողովուրդների ինքնորոշման իրավունքին[1]: Այսպիսով, ՄԱԿ-ի կանոնադրությունը հստակորեն սահմանում է, որ տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է պետությունների միջև հարաբերություններին: Տարածքային ամբողջականությունը՝ որպես ՄԱԿ-ի նպատակների իրականացմանն ուղղված սկզբունք, չի կարող հակադրվել ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքին:

Կարելի է Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում խաղաղ բնակ-

---

[1] Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն // http://www.un.am/res/UN%20Treaties/Charter_arm_unicode.pdf /01.11.2021/, Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի եզրափակիչ ակտ, Հելսինկի 1975 թ. // http://www.osce.org/hy/mc/39507?download=true /01.11.2021/: See e.g. **Luchterhandt O**., Der Status der Republik Berg-Karabach aus der Sicht des sowjetischen Staatsrechts, in: **Kannatian R**,, (Hrsg.): Geschichte und Gegenwart in schwierigem Umfeld, Frankfurt, M 1998, S. 266-286, **Soghomonyan V**., [Hrsg.], Lösungsansätze für Berg-Karabach/Arzach. Selbstbestimmung und der Weg zur Anerkennung, Nomos 2010, S. 11-77.

չության նկատմամբ Ադրբեջանի կատարած ռազմական հանցագործություն-ները բաժանել մի քանի խմբերի.

- գլխատում
- խեղում
- նվաստացում (բարոյահոգեբանական)
- մշակութային ժառանգության ոչնչացում
- արգելված զինատեսակների կիրառում:

Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում նորություն չէր ադրբեջանական իշխանությունների կողմից վարձկանների ներգրավումը ռազմական գործողություններին[1]: Ադրբեջանը նման քայլի դիմել է դեռևս Արցախյան առաջին պատերազմի ժամանակ[2], երբ ներգրավել է միջազգային ահաբեկչական ցանցերի՝ Թալիբանի և Ալ-Կաիդայի ավելի քան 2000[3] և Շամիլ Բասաևի հարյուրավոր չեչեն գրոհայինների[4]:

Հարցն այն է, որ ադրբեջանական կողմի համար էական չէ, թե ինչպիսի իրավիճակ է՝ պատերազմական, թե խաղաղ. Արցախի Մաճկալաշեն գյուղի բնակիչը՝ գերեվարված 2021 թ. հուլիսի 26-ին, ենթարկվել է խոշտանգումների ադրբեջանցի զինծառայողների կողմից[5]: Ի դեպ, Ադրբեջանում դեռևս 1993 թ. ներքին գործերի նախարարի մակարդակով ընդունվել է որոշում, որ զոհված հակառակորդների դիակները չի կարելի խեղել[6]:

Արցախի ժողովրդի իրավական պահանջի առումով հարկ է ևս մեկ անգամ նշել, որ արցախահայությունն իրացրել է իր ինքնորոշման իրավունքը ըստ միջազգային իրավանորմերի, և Ադրբեջանը չի կարող դրան առարկել տարածքային ամբողջականության սկզբունքների հիման վրա: Միաժամանակ Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունը բացառում է Արցախի հայությանը որևէ եղանակով Ադրբեջանի իրավազորության ներքո գտնվելու հնարավորությունը՝ մեկ անգամ ևս հաստատելով Արցախի ինքնորոշման այլընտրանք չունենալու հանգամանքը, թեև պատկերն այսօր բոլորովին այլ է. ունենք Արցախի տարածքի կրճատում և հայրենազրկված արցախահայության մի ստվար զանգված:

Չափազանց անհանգստացնող են հայերին սպանող անձանց գովաբանելու դեպքերը՝ անկախ այն հանգամանքից՝ դա արվել է ռազմի դաշտում, թե խաղաղ պայմաններում: Ինչպես, օրինակ, Ռամիլ Սաֆարովը 2004 թ.

---

[1] Տե՛ս **Широкорад А. Б**., Карабах. Тысячелетняя война на древней земле, Москва, 2021, с. 399:

[2] Տե՛ս **Charalampidis I**., “Sponsored to Kill”, “MIA” Publishers, Moscow 2013 // http://karabakh-facts.com/wp-content/uploads/2013/02/Ioannis-Charalampidis-Sponsored-to-Kill-ENG.pdf /01.11.2021/:

[3] Տե՛ս **Юнус Л**., Будущее за профессиональной Армией // «Зеркало» (Баку), 10 августа 2002:

[4] Տե՛ս «Ичкерия» (РФ), 25 июня 1992:

[5] https://www.facebook.com/gegham.stepanian/posts/3905231222939596 /01.11.2021/

[6] Տե՛ս Azerbaijan, Ministry of the Interior, Command of the Troops of the Interior, Order № 42, Baku, 9 Jan., 1993, § 5:

փետրվարի 19-ի գիշերը Բուդապեշտում քնած ժամանակ դաժանաբար սպանեց հայ սպա Գուրգեն Մարգարյանին, որտեղ նրանք մասնակցում էին ՆԱՏՕ-ի անգլերեն լեզվի սեմինարին, իսկ Ադրբեջանի պետական մարմինները փառաբանեցին մարդասպանի արարքը[1]՝ շնորհելով նրան Ադրբեջանի ազգային հերոսի կոչում[2]:

Ադրբեջանի կողմից հայ խաղաղ բնակչության նկատմամբ հանցագործ արարքները շարունակվեցին նաև Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում: Ադրբեջանի զինված ուժերը, խախտելով ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետը, կիրառելով ականանետային-հրթիռահրետանային համակարգեր և անօդաչու թռչող սարքեր, ռազմական հարձակումների թիրախ են դարձրել ինչպես Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մարտական հենակետերը, զորամասերը, այնպես էլ հայ-ադրբեջանական սահմանի Տավուշի մարզին հարող՝ խորը թիկունքում գտնվող օբյեկտները և խաղաղ բնակավայրերը, որի հետևանքով սպանվել են զինծառայողներ, նյութական, զույքային վնասներ է կրել խաղաղ բնակավայրերի քաղաքացիական բնակչությունը:

Շարունակելով ագրեսիվ պատերազմ վարելու իր հանցավոր մտադրությունները՝ 2020 թ. սեպտեմբերի 29-ին ադրբեջանական զինուժը հարվածային անօդաչու թռչող սարքերով, հրետանային միջոցներով ինտենսիվ հրթիռակոծել է Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանում տեղակայված զորամասի շինությունները, նույն տարածաշրջանի մի քանի բնակավայրեր: Դրանց հետևանքով սպանվել է խաղաղ բնակիչ, վնասվել են քաղաքացիական անձանց անշարժ և շարժական գույքեր, քաղաքացիական ենթակառուցվածքներ [տե՛ս 3, 4, 5, 6, 7, 8 նկարները]:

Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը շարունակել է պատերազմական հանցագործություններ իրականացնել՝ տարբեր զինատեսակներից թիրախավորելով Արցախի հիվանդանոցներն ու դպրոցները, բնակելի տներն ու հանրային նշանակության այլ օբյեկտներ՝ սպանելով կամ մարմնական վնասվածքներ պատճառելով խաղաղ բնակչությանը[3]:

Արցախի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը հրապարակել է 44-օրյա պատերազմի հետևանքով զոհված, անհետ կորած, գերեվարված և գերությունից վերադարձած Արցախի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անձանց վերաբերյալ տվյալներ, ըստ որոնց՝ ադրբեջանական ագրեսիայի հետևանքով զոհվել է Արցախի Հանրապետու-

---

[1] https://regnum.ru/news/221381.html // https://go.mail.ru/search_video?fr=ps&gp=843253&q=Ramil%20safarov%20Azerbaijan%27s%20national%20hero&frm=ws_t&sig=34fe43a313&s=youtube /03.11.2021/

[2] https://www.youtube.com/watch?v=J2yI4cayt2Y /11.11.2021/

[3] https://novostink.net/photoreports/293199-kadry-roddoma-stepanakerta-razbomblennogo-vooruzhennymi-silami-azerbaydzhana.html // https://lenta.ru/news/2020/10/28/roddom/ // https://ria.ru/20201028/stepanakert-1581933191.html // https://www.youtube.com/watch?v=O55Gxm_ /03.11.2021/

թյան 750 քաղաքացի, որոնցից 81-ը եղել են քաղաքացիական անձինք։ Նրանցից 42-ը զոհվել է ադրբեջանական զինված ուժերի հեռահար հարվածների՝ հրթիռակոծության, հրետակոծության, ռմբակոծության, դիվերսիոն խմբերի հրազենային կրակոցների հետևանքով, 39-ը՝ ադրբեջանական գերության կամ առնվազն վերահսկողության ներքո՝ ֆիզիկական բռնության, դանակահարության, գլխատման, հրազենային դիմահար կրակոցի կիրառմամբ։ Նշենք նաև, որ «վիրավորում է ստացել 163 քաղաքացիական անձ… Հաստատված տվյալներով՝ Արցախի Հանրապետությունից 83 անձ համարվում է անհետ կորած, որից 23-ը քաղաքացիական անձինք են»[1]:

Զինված հակամարտության ընթացքում ադրբեջանական ուժերի գործած պատերազմական հանցագործությունների ցանկը ներառում է նաև Ադրբեջանի հսկողության ներքո գտնված քաղաքացիական անձանց ու ռազմագերիների սպանությունը և խոշտանգումը։

2020 թ. հոկտեմբերի 10-ին Հադրութ քաղաքում իրենց տանը սպանվել են հաշմանդամություն ունեցող անձը և նրա տարեց մայրը[2]: Հոկտեմբերի 15-ին սոցիալական ցանցերում հայտնված տեսանյութում երևում էր, թե ինչպես են ադրբեջանական զինված ուժերը Հադրութ քաղաքում նվաստացրել և սպանել տեղի ու Տայք գյուղի երկու բնակչի[3]։ Ադրբեջանական զինծառայողները նրանց ձեռնաշղթաներ հագցրած վիճակում սպանել էին՝ փաթաթելով Հայաստանի Հանրապետության և Արցախի դրոշներով՝ այդ կերպ ի ցույց դնելով իրենց ատելությունը հայերի նկատմամբ։ Հոկտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանը տեղեկություններ է հրապարակել ադրբեջանական բանակի սպայի կողմից հայ զինվորին գլխատելու վերաբերյալ[4]։ Սոցիալական ցանցերում հրապարակվել են Արցախի պաշտպանության բանակի զինվորների գլխատման այլ դեպքեր ևս։ Ավելի ուշ Արցախի Տող գյուղ ներթափանցած դիվերսիոն խումբը սպանել է երկու քաղաքացիական անձանց՝ գլխատելով մեկին և կրակելով մյուսին[5]։ Գլխատումը կյանքի իրավունքի և խոշտանգման արգելքի խախտում է, բացի այդ՝ գլխատելու և լուսանկարը սոցիալական ցանցերում տեղադրելու փաստը նաև ծանր տառապանք է պատճառում տվյալ անձանց ընտանիքի անդամներին։

Հոկտեմբերի 30-ին սոցիալական ցանցերում տարածվեց ըստ երևույթին դիտավորությամբ սպանված՝ Արցախի պաշտպանության բանակի գերե-

---

[1] https://www.facebook.com/gegham.stepanian/posts/3851245165004869 /01.11.2021/

[2] https://twitter.com/Artak_Beglaryan/status/1315581056075128832?s=20 /01.11.2021/

[3] https://www.bellingcat.com/news/rest-of-world/2020/10/15/an-execution-in-hadrut-karabakh/?fbclid=IwAR0rtIchQzDgSDSC7lkvLMxEiIUzRSgG5F-Fv0pxEd68s4GPFS1v7z7wD6Q /01.11.2021/

[4] https://www.facebook.com/photo/?fbid=733479247251283&set=a.363684047564140 // https://ombuds.am/en_us/site/ViewNews/1337 /01.11.2021/

[5] https://www.facebook.com/Chuckholton/posts/10160500653406038 /01.11.2021/

վարված զինծառայողների վերաբերյալ տեսանյութ, որտեղ երևում էին Արցախի պաշտպանության բանակի առնվազն 19 զինծառայողների մարմիններ, ոմանք ձեռնաշղթաներով, այլք՝ մերկ[1]:

Նոյեմբերի 22-ին սոցիալական ցանցերում հայտնվեց տեսանյութ, որում երևում էր, թե ինչպես է հայ քաղաքացիական անձը մերկ վիճակում կենդանի գլխատվում ադրբեջանական զինծառայողների կողմից[2]: Անձին կենդանի գլխատելու փաստն ակնհայտ է, քանի որ նրա գլխի զգայարանների գործառույթները դեռևս շարունակում էին ակտիվ մնալ:

Դիակների խեղումը միջազգային իրավունքում ճանաչված է որպես «մարդկային արժանապատվության դեմ ոտնձգության» տեսակի պատերազմական հանցագործություն:

Նվաստացում. 2020 թ. հոկտեմբերի 22-ին ադրբեջանական «Կանալ 1» լրատվական ալիքը տեսանյութ էր հրապարակել, որում ադրբեջանական զինվորականներն Արցախի պաշտպանության բանակի համազգեստ կրող ութ անձանց հրամայում էին ասել՝ «Ղարաբաղ՝ Ադրբեջան»: Ադրբեջանական սոցիալական ցանցերի օգտատերերի հրապարակած մեկ այլ տեսանյութում[3] մի խումբ հայ զինվորների հրամայում էին ծնկի գալ՝ ձեռքերը գլուխների ետևում և բարձրաձայնել «Ղարաբաղ՝ Ադրբեջան»: Սոցիալական ցանցերում տեղադրված ևս մեկ տեսանյութում երևում էր Արցախի պաշտպանության բանակի՝ ադրբեջանական զինվորականների վերահսկողության ներքո գտնվող մի զինվոր, որի գլխին ոտքերով հարվածներ էին հասցնում և հրամայում, որ հայհոյի Ն. Փաշինյանին՝ փորձելով նվաստացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին և տվյալ անձին: Տեսանյութում ակնհայտորեն երևում էր, որ զինվորը ցավեր ունի և սթրեսային վիճակում է[4]:

Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի կողմից 2021 թ. ապրիլի 12-ին Բաքվում արցախյան վերջին պատերազմի հետևանքով որպես ավար վերցված հայկական զրահատեխնիկայի նորաբաց այգին հայ զինվորի նսեմացման վառ դրսևորումներից է[5], որը տեղակայված է հինգ հեկտար տարածքում: Այգում, հայկական զրահամեքենաներից, հայ զինվորներին պատկանած սաղավարտներից և այլ ռազմական տեխնիկայից բացի, ցուցադրվում են նաև հայ զինվորների աղավաղված մանեկեններ, որը հանրային մեծ հնչեղություն ստացավ և քննադատությունների առիթ դարձավ Ալիևի հասցեին, քանզի նրան համեմատում էին Ադոլֆ Հիտլերի և Սադդամ Հուսեյնի հետ[6]:

Նոյեմբերի 1-ին Արցախի պաշտպանության բանակի կողմից գերեվար-

---

[1] https://twitter.com/Artak_Beglaryan/status/1322290987377610752?s=20 /01.11.2021/

[2] https://t.me/karabah_news/4335?fbclid=IwAR2X0fCKrLZbQyZpzmrwFT5dnAOtskrtS5xOeG9kD9MePvRLM-F9DNfzU2A /01.11.2021/

[3] https://www.youtube.com/watch?v=ftHHS7gUSu0 /01.11.2021/

[4] https://twitter.com/KarabakhRecords/status/1319203595368226818 /01.11.2021/

[5] https://www.bbc.com/russian/news-56735608 /01.11.2021/

[6] https://www.youtube.com/watch?v=dezaHx1TGQM /01.11.2021/

ված սիրիացի վարձկանն իր ցուցմունքում հայտնել էր, որ իրեն խոստացել են ամսական 2.000 ամերիկյան դոլլար Արցախում կռվելու համար, ինչպես նաև 100 ամերիկյան դոլլարի «պարգևավճար» «կաֆիրի» (անհավատի) գլխի դիմաց[1]:

Համացանցում տեղադրված մեկ այլ տեսանյութում երևում է, թե ինչպես են ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող հայ զինվորները նվաստացվում[2]:

Միջազգային հանրությունը և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցները պետք է քայլեր ձեռնարկեն հայ զինծառայողների և քաղաքացիական անձանց նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի կատարած վայրագությունների, ինչպես նաև աճյունների խեղման կանխարգելմանն ուղղված և ցույց տան, որ պատրաստ են պաշտպանել ու երաշխավորել մարդու հիմնական իրավունքները, հավատարիմ մնալ իրենց հռչակած արժեքներին:

Նվաստացման ծավալներն ու խորությունն ըմբռնելու համար բավական է հիշել Ալիևի խոսքերն ուղղված Ն. Փաշինյանին՝ Արցախի կարգավիճակի առնչությամբ. «Ի՞նչ պատահեց Փաշինյան, ո՞ւր կորավ ստատուսը, գրողի ծոցը գնաց»[3]: Սա հետագայում Ադրբեջանում դարձավ վերջինիս ծաղրի տասնյակ տեսահոլավակների նյութ[4]:

2021 թ. սեպտեմբերի 17-ին ադրբեջանական զինված և դիմակավորված զինծառայողները կանգնեցրել են արցախցի 15-16 տարեկան երեխաներին տեղափոխող ավտոբուսը, ստուգել նրանց հեռախոսները՝ ինչ-որ տեսանյութեր գտնելու պատրվակով: Այդ ընթացքում նաև ավտոբուսի վրայից դանակով քերել են Արցախի դրոշը[5]: Ադրբեջանական աղբյուրները հպարտությամբ տարածում են այս տեսանյութը: Բայց այստեղ հարցը պահվածքն է, որ ադրբեջանական զինծառայողները ցուցաբերում են երեխաների նկատմամբ՝ հետապնդելով նրանց բացահայտ ահաբեկելու նպատակ՝ դիմակով ու զինված:

Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում քաղաքացիական օբյեկտների և ենթակառուցվածքների դեմ լայնորեն կիրառվում էին նաև ըստ միջազգային մարդասիրական իրավունքի արգելված՝ կասետային զինատեսակներ, հատկապես՝ Ստեփանակերտում, ինչի հետևանքով ոչ միայն պատճառվել են զանգվածային ավերածություններ, այլև բնակավայրերում

---

[1] https://greekcitytimes.com/2020/11/06/syrian-artsakh-armenian/?fbclid=IwAR39hzClcepl2-k12z2h6_RUj6Vm0smywCYnS2RDr4xZMli5ef2OmRz5O6M // https://horizonweekly.ca/am/reward-of-100-dollars-for-each-beheaded-infidel-testimony-of-captured-syrian-mercenary-in-artsakh/?fbclid=IwAR0cAUe4IUPydgSRbm6PGxCEda6-ojprX38OPf_JJKH1NaOQp9jSkHmWAXQ /01.11.2021/

[2] https://twitter.com/Artak_Beglaryan/status/1330936149347536900 /01.11.2021/

[3] Տե՛ս https://www.youtube.com/watch?v=CdY8g_7ThN0 /01.11.2021/

[4] https://www.youtube.com/results?search_query=ne+oldu+pashinyan /01.11.2021/

[5] shorturl.at/eqFWX /01.11.2021/

առկա չպայթած զինամթերքները լրացուցիչ ռիսկեր են առաջացրել քաղաքացիական բնակչության համար: Հոկտեմբերի 30-ից սկսած՝ ադրբեջանական զինված ուժերն այրող զինատեսակներ էին կիրառում՝ առաջացնելով լայնածավալ անտառային հրդեհներ ու վտանգելով թե՛ մարդկային կյանքը և թե՛ շրջակա միջավայրը[1]: Արբանյակային լուսանկարները ցույց են տալիս, որ սպիտակ ֆոսֆորի կիրառման հետևանքով պատճառվել են հրդեհներ և վերքեր [տե՛ս նկար 9]:

Հակամարտության ընթացքում միջազգային Իրավապաշտպան կազմակերպությունը (Human Rights Watch) ուսումնասիրել է, թե արդյոք հակամարտության բոլոր կողմերը հավատարիմ են միջազգային մարդասիրական իրավունքին, որը զինված ուժերից պահանջում է մշտապես տարբերակել զինծառայողներին և քաղաքացիական անձանց, ինչպես նաև ռազմական և քաղաքացիական օբյեկտները:

2020 թ. հոկտեմբերի 23-ին Իրավապաշտպան կազմակերպությունը հայտարարել է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակավայրերի դեմ կիրառված՝ արգելված կասետային զինատեսակների մասին. փորձագետները արձանագրել են այդտեղ կասետային զինատեսակների օգտագործման չորս դեպք[2]: Իրավապաշտպան կազմակերպությունը դիմել է Ադրբեջանի կառավարությանը՝ տեղում հետաքննություն անցկացնելու թույլտվություն ստանալու համար, սակայն մերժվել է:

Իրավապաշտպան կազմակերպությունն ուսումնասիրել է հրթիռների, հարվածների և զինամթերքի մնացորդները, որոնք պայթել են, ինչպես նաև չպայթած զինամթերքը Ստեփանակերտի որոշ հատվածներում: Այն ուսումնասիրել է նաև հրթիռի, պայթյունի հետևանքների և զինամթերքի մնացորդների, ինչպես նաև չպայթած զինամթերքի լուսանկարները Հադրութ քաղաքում: Կասետային զինամթերքի օգտագործմամբ հարձակումները սկսվել են սեպտեմբերի 27-ի առավոտյան Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գրասենյակից մոտ 200 մետր հեռավորության վրա գտնվող բնակելի թաղամասում[3]:

Փաստական տվյալները վկայում են ադրբեջանական զինուժի կողմից ռազմական գործողությունների շարունակական բնույթի, համակարգված, կանխամտածված և նպատակաուղղված լինելու մասին, որոնք իրականացվում են ազգային ատելության շարժառիթով, կոպտորեն խախտում միջազգային իրավունքի նորմերը, մասնավորապես ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի XXIX նստաշրջանի բանաձևով հաստատված՝ ագրեսիվ ռազմական գործողությունների արգելքը[4]:

---

[1] https://www.france24.com/en/europe/20201119-nagorno-karabakh-ceasefire-armenia-accuses-azerbaijan-of-using-phosphorus-bombs /01.11.2021/

[2] https://www.hrw.org/news/2020/10/23/azerbaijan-cluster-munitions-used-nagorno-karabakh?fbclid=IwAR1nBbKtMqK8w9wv0NeXlZvxs-U9IWG0VyIN5pdf71xLMSpcro1xX-i4jiU /01.11.2021/

[3] Նույն տեղում:

[4] https://www.prosecutor.am/am/mn/8014/ /01.11.2021/

Ամփոփելով հարկ է ընդգծել, որ Ադրբեջանի զինուժը խաղաղ բնակչության և զինվորականների հանդեպ թույլ է տվել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ, որոնք որակվում են որպես պատերազմական հանցագործություններ, առնչվում մասնավորապես քաղաքացիական անձանց ու պատերազմական գործողություններին մասնակցությունը դադարեցրած զինվորականների սպանություններին, խոշտանգումներին, ինչպես նաև դիակների խեղմանը:

Մշակութային ժառանգության ոչնչացումը տեղաբնիկների հետքի վերացումն է տվյալ տարածաշրջանից: Ադրբեջանի Հանրապետությունը Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում առաջին անգամ չէ, որ անարգանք է դրսևորում հայկական մշակութային ժառանգության հանդեպ: Կարծում ենք՝ բոլորին է հայտնի Ադրբեջանի Հանրապետության կողմից 2004-2006 թթ. Նախիջևանի մոտ 10 000 հայկական խաչքարերի ոչնչացումը[1]:

Չնայած աշխարհագրական փոքր տարածքին՝ Արցախում են գտնվում հայկական մշակութային ժառանգության կարևորագույն օբյեկտներ և հնագիտական նշանակալից վայրեր: Հայկական մշակույթի շուրջ 4.000 նմուշներ կան Արցախում՝ ներառյալ 370 եկեղեցի, 119 ամրոց և պատմական ու մշակութային այլ հուշարձաններ: Եկեղեցիները կառուցվել են IV-XXI դարերում: Արժեքավոր հնագիտական օբյեկտներից է Տիգրանակերտ հինավուրց քաղաքը, որը մ. թ. ա. I հարյուրամյակից մինչև մ. թ. XIII հարյուրամյակի կառույց է[2]:

Առնվազն պատմական և մշակութային հայկական 1456 հուշարձաններ հայտնվել են ադրբեջանական վերահսկողության ներքո: Դրանց թվում են 161 հայկական եկեղեցիներ, Տիգրանակերտի հնագիտական տարածքը, Ազոխի պալեոլիթյան քարանձավը, Նոր Կարմիրավանի դամբարանները, Միրիկը, Կերենը և հնագիտական տարբեր հուշարձաններ՝ պալատներ, կամուրջներ ու պատմական թաղամասեր: Դրանցից զատ՝ ադրբեջանական վերահսկողության ներքո հայտնված տարածքներում գործել են ութ պետական թանգարաններ և պատկերասրահներ՝ 19.311 ցուցանմուշներով, ինչպես նաև Շուշիի գորգերի և հայկական դրամի թանգարանները, որոնք մասնավոր հավաքածուներ էին[3]:

2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Արցախյան պատերազմի առաջին իսկ օրերից Ադրբեջանը կրկին թիրախավորեց հայկական մշակութային և կրոնական ժառանգությունը: Առաջին միջադեպն արձանագրվեց 2020 թ. հոկտեմբերի 8-ին, երբ Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչե-

---

[1] https://www.aaas.org/resources/high-resolution-satellite-imagery-and-destruction-cultural-artifacts-nakhchivan-azerbaijan /01.03.2021/

[2] https://artsakhlib.am/2018/01/30/%D5%B2%D5%A1%D6%80%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B2-%D5%A9%D5%A1%D6%84%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A3%D5%A1%D5%B6%D5%B1/ /01.11.2021/

[3] https://www.24news.am/news/163312 // https://www.azatutyun.am/a/31069905.html /01.11.2021/

ցոց եկեղեցին [տե՛ս 10, 11 նկարները] երկու անգամ հրետակոծվեց ադրբեջանական զինված ուժերի կողմից՝ էական վնաս պատճառելով եկեղեցուն թե՛ դրսից և թե՛ ներսից, իսկ ավելի ուշ, չնայած մշակութային ժառանգության պահպանման համար Ալիևի խոստմանը, եկեղեցին ենթարկվեց վանդալիզմի[1]: Նոյեմբերի 6-ին Ադրբեջանը ռմբակոծեց Տիգրանակերտի մոտակայքում գտնվող հնագիտական ճամբարը՝ ոչնչացնելով հնագիտական երկու տնակ և վնաս պատճառելով ևս երկուսին:

2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո մշտապես տեղեկություններ են ստացվում հայկական ժառանգության ոչնչացման կամ վնասման մասին: Մտահոգիչ առաջին լուրը վերաբերում էր Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու թիրախավորմանը: Շուշիի նկատմամբ ադրբեջանական վերահսկողություն հաստատելուց կարճ ժամանակ անց սոցիալական ցանցերում շրջանառվում էին նկարներ և տեսանյութ, որոնցում տեսանելի էր XIX դարում կառուցված Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին՝ մասնակի վնասված վիճակում, մասնավորապես բավականաչափ տուժել էին նրա գմբեթը և զանգակատունը[2]: Եկեղեցուն հասցված վնասները նկատելի են արբանյակային լուսանկարներում:

Սոցիալական ցանցերում հրապարակված տեսանյութում երևում է, թե ինչպես են ադրբեջանական զինված ուժերը դիտավորյալ ոչնչացնում հայկական հուշարձաններն Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Առաքել գյուղում[3]:

Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2021 թ. մարտի 27-ին հրապարակած տեսանյութում երևում է, թե ինչպես են ադրբեջանցի զինվորականները (համազգեստի վրա բացահայտ երևում է նաև թուրքական դրոշը) անարգանքի, վանդալիզմի ենթարկում Մատաղիսի Սուրբ Եղիշե հայկական եկեղեցին (XIX դար)[4]:

Մարտի 30-ին սոցիալական ցանցերում հայտնվեցին լուսանկարներ, որտեղ երևում էր, թե ինչպես են ադրբեջանական վանդալիզմի պատճառով տուժում Շուշի քաղաքում գտնվող Հայոց ցեղասպանության, Հայրենական պատերազմի և Արցախյան առաջին պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանները[5]:

Ավելին, լուսանկարները և տեսանյութերը փաստում են, որ Ադրբեջանի նախագահն անձամբ է հրահանգել ջնջել հայկական հետքերն Արցախից:

Ադրբեջանը պետական ամենաբարձր մակարդակով լծվել է հայկական առաքելական եկեղեցիների մշակութային յուրացմանը և դրանց «ալբանա-

---

[1] https://www.youtube.com/watch?v=voDA-ueiRx4 /01.11.2021/

[2] https://www.azatutyun.am/a/31069905.html /01.11.2021/

[3] https://yelaket.am/am/article/12621/ /01.11.2021/

[4] https://ombuds.am/am/site/VideoGalleryView/520 /01.11.2021/

[5] https://livenews.am/press/tag/%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D5%AC%D5%AB%D5%A6%D5%B4/ /01.11.2021/

կան» լինելու մասին կեղծ պնդումների լեգիտիմացման քաղաքականությանը, ինչպես նաև հայկական կրոնական ժառանգության յուրացմանը, անարգմանը և անխտիր բոլոր օբյեկտների իսպառ ոչնչացմանը:

Ադրբեջանի Հանրապետության ռասայական խտրականության քաղաքականությունն ապացուցվում է հետևյալ ուղղություններով. Ադրբեջանում հայերի նկատմամբ թշնամական վերաբերմունքի առկայությունը՝ նախագահի և պետական իշխանության այլ մարմինների կողմից ատելության խոսքի տարածումը, մարդու իրավունքների բացահայտ խախտումները՝ հիմնված ռասայական խտրականության վրա, գերիների (այդ թվում քաղաքացիական) հանդեպ անմարդկային վերաբերմունքն ու խոշտանգումները, որոնք երբեմն հանգեցնում են մահվան, ԶԼՄ-ների և համացանցի միջոցով թշնամության քարոզչությունը, Ադրբեջանի տարածքում հայերի մշակութային ժառանգության անարգումն ու ոչնչացումը:

Վերոնշյալները, որոնք գերիշխում են Ադրբեջանում հանրային կյանքի բոլոր ոլորտներում, հակահայկական միջավայրի և քաղաքականության առկայությունը փաստող ապացույցներ են:

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացմանն առնչվող միջազգային կոնվենցիայի ներկայացրած խախտումները բավարար են նշելու, որ Ադրբեջանի Հանրապետությունն իրականացնում է համաձայնեցված, լավ կազմակերպված և կայուն ռասայական խտրականության քաղաքականություն հայերի դեմ:

Միջազգային հանրությունը պետք է վճռական գնահատական տա ցայսօր շարունակվող Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությանը, միջազգային իրավունքի հանդեպ ծայրահեղ անարգանքին և ադրբեջանա-արցախյան (ղարաբաղյան) հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցություններից հրաժարվելու փորձերին:

Պատերազմի ընթացքում Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության, Հայաստանի և Սփյուռքի ազդեցիկ կառույցների, Արցախի օտարերկրյա համակիրների սերտ համագործակցության արդյունքում 23 երկրների օրենսդիր մարմիններ, քաղաքային խորհուրդներ, քաղաքական տարբեր գործիչներ և կուսակցություններ Արցախի ժողովրդի դեմ ռազմական ագրեսիան դատապարտող, Արցախի Հանրապետության անկախությանը և նրա բնակիչների անքակտելի իրավունքները սատարող շուրջ 150 բանաձևեր են ընդունել և հայտարարություններ արել:

Աննախադեպ էին Ֆրանսիայի խորհրդարանի երկու պալատների ընդունած բանաձևերը. Ֆրանսիայի Սենատը 2020 թ. նոյեմբերի 25-ին 305 կողմ և մեկ դեմ[1], իսկ Ֆրանսիայի Ազգային ժողովը դեկտեմբերի 3-ին 188 կողմ և երեք դեմ ձայների հարաբերակցությամբ բանաձևեր են ընդունել

[1] https://www.azatutyun.am/a/30983927.html /01.11.2021/

Արցախի անկախությունը ճանաչելու անհրաժեշտության վերաբերյալ:

Արցախի դեմ ագրեսիան դատապարտող բանաձևեր են ընդունվել նաև Ավստրալիայի, Լյուքսեմբուրգի, Նիդերլանդների խորհրդարաններում[1]:

ԱՄՆ-ի Կոնգրեսի մի խումբ անդամներ՝ թե՛ Սենատից և թե՛ Ներկայացուցիչների պալատից, հայտարարություններ են տարածել, որոնցով դատապարտել են Ադրբեջանին ու Թուրքիային՝ ազատ և անկախ Արցախի Հանրապետության դեմ ռազմական հարձակման համար[2]:

Չնայած հնչեցրած բոլոր կոչերին և ընդունված բանաձևերին՝ հետպատերազմյան պայմաններում Արցախի քաղաքացիների պատշաճ անվտանգության ապահովումը բախվում է նոր մարտահրավերների: Ադրբեջանական իշխանություններն ավելի են խորացրել հայատյացությունն ու թշնամանքի քարոզը: Արցախի պաշտպանության բանակի և այլ ուժային մարմինների կողմից, Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի աջակցությամբ ու երաշխիքներով, մեծածավալ աշխատանքներ են կատարվել նշված մարտահրավերների չեզոքացման ուղղությամբ: Սակայն, կարծում ենք, քանի դեռ այս չափազանց կարևոր խնդիրը Ազգերի ինքնորոշման իրավունքից ելնելով լուծում չի ստացել, Արցախի մեծ մասի հայրենազրկված և մյուս մասի բնակչության անվտանգության հարցը կմնա առկախ:

Ուսումնասիրելով և վերլուծելով ԱԴՀ, ԱԽՍՀ և ներկայիս Ադրբեջանի Հանրապետության վարած քաղաքականությունը Հայաստանի ու հայերի հանդեպ, կատարված և մինչ օրս շարունակվող ռազմական և ցեղասպան հանցագործությունները՝ կարող ենք փաստել, որ առաջին հերթին Թուրքիայի անպատժելիությունն ու միջազգային հանրության անտարբերությունը, այնուհետև Ադրբեջանի Հանրապետության մեկդարյա անպատժելիությունը նպաստում են դրա ցեղասպան քաղաքականության շարունակությանը՝ արևելահայությանը կանգնելով ցեղասպանության վտանգի առջև:

Ալիկ Ղարիբյան, Ռուզաննա Գասպարյան – *Ադրբեջանի կատարած ռազմական հանցագործությունները Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում*

1918 թ. մայիսին անկախության հռչակումից ի վեր՝ Ադրբեջանի Հանրապետությունը եղել է Թուրքիայի ցեղասպան քաղաքականության մասը: Փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերի կոտորածները զանգվածային և պարբերական բնույթ ունեին, որոնք դրսևորվում են առ այսօր: Թեև 2020 թ. Արցախյան պատերազմն աննախադեպ էր իր ծավալով, պատերազմական հանցագործությունների դաժանությամբ ու միջազգային մարդասիրական իրավունքի դեմ ոտնձգություններով, միևնույն ժամանակ այն Բաքվի ավելի քան մեկ դար տևած հայատյաց քաղաքականության արտացոլումն էր: 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Արցա-

[1] http://www.nkrgov.am/hy/official-news/item/2021/05/04/haxordum040521/ /01.11.2021/
[2] https://www.azatutyun.am/a/30904373.html /01.11.2021/

խում տեղի ունեցած պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերի հարձակումներն ուղեկցվել են անմարդկային և դաժան վերաբերմունքով, թե՛ ռազմագերիների և թե՛ քաղաքացիական գերիների գլխատումներով ու խոշտանգումներով: Միջազգային հանրությունը պետք է հստակ գնահատական տա ցայսօր շարունակվող Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությանը, միջազգային իրավունքի հանդեպ ծայրահեղ անարգանքին և ադրբեջանա-արցախյան (ղարաբաղյան) հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցություններից հրաժարվելու փորձերին:

Алик Гарибян, Рузанна Гаспарян – ***Военные преступления, совершенные Азербайджаном в ходе 44-дневной Арцахской войны***

Ключевые слова – *Арцах, Азербайджанская Республика, международное гуманитарное право, геноцидальная политика, агрессивной политика, резня армян, военнопленные, гражданские пленные, мировая общественность*, противостояние

Начиная с провозглашения независимости в мае 1918 г. Азербайджанская Республика стала частью геноцидальной политики Турции. Изучение фактов показало, что резня армян носила массовый и периодический характер, что проявляется до сих пор. Несмотря на то что Арцахская война была беспрецедентной по своим масштабам, по тяжести военных преступлений и посягательствам на международное гуманитарное право, в то же время она явилась отражением армяноненавистнической политики Баку, продолжающейся уже более века. В ходе войны, произошедшей в Арцахе в сентябре-ноябре 2020 г., нападения азербайджанских вооруженных сил сопровождались бесчеловечным и жестоким отношением, обезглавливанием и пытками как военнопленных, так и гражданских пленных. Мировая общественность должна дать четкую оценку продолжающейся до сих пор агрессивной политике Азербайджана, крайнему пренебрежению принципами международного права и попыткам отказа от переговоров, направленных на урегулирование азербайджано-арцахского (карабахского) противостояния.

Alik Gharibyan, Ruzanna Gasparyan – ***War Crimes Committed by Azerbaijan During the 44-Day Artsakh War***

Key Words – *Artsakh, Republic of Azerbaijan, genocidal policy, aggressive policy, massacres of Armenians, atrocities of war crimes and violations, humanitarian law, inhuman and cruel treatment, civilian prisoners, conflict*

Since the declaration of independence in May 1918, the Republic of Azerbaijan has been part of Turkey’s genocidal policy. The study of facts shows that the massacres of Armenians were of a massive and regular nature, which are manifested to this day. Even though the 2020 Artsakh war was unprecedented in its scale, with the atrocities of war crimes and violations of international humanitarian law, it was the reflection of Baku’s anti-Armenian policy of more than a century. During the 2020 Artsakh war, the attacks of the Azerbaijani armed forces were accompanied by inhuman and cruel treatment, which was manifested in beheading and torturing both prisoners of war and civilian prisoners. The international community should give a strong assessment of Azerbaijan’s ongoing aggressive policy, extreme disregard for international law, and attempts to abandon negotiations on the settlement of the Azerbaijani-Artsakh (Karabakh) conflict.

1. Շուշի, 1920 թ. հայերի կոտորածից հետո

2. Շուշի, 1920 թ.

3. Քաղաքացիական բնակչության թիրախավորում, Արցախ, 2020 թ. սեպտեմբեր

4. Քաղաքացիական բնակչության թիրախավորում, Արցախ, 2020 թ. սեպտեմբեր

5. Գեղարքունիքի մարզի Վարդենիսի գյուղերում անօդաչու թռչող սարքերի հարձակման հետևանքով այրված քաղաքացիական ավտոբուս, 2020 թ.

6. Ֆրանսիական « Le Monde » պարբերականի լրագրողների հրետակոծման ենթարկված մեքենան, 2020 թ.

7. Ստեփանակերտի ծննդատունը, 2020 թ.

8. Բնակելի շենք Շուշիում, 2020 թ. հոկտեմբեր

9. Ֆոսֆորային արգելված զինատեսակի կիրառումն Արցախի անտառներում

10. Շուշիի Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին հրետակոծությունից հետո, 2020 թ.

11. Շուշիի Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին ներսից, 2020 թ.

Ալիկ Ղարիբյան – ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու (algharibyan@yahoo.com)

Ռուզաննա Գասպարյան – ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ավագ լաբորանտ, ցեղասպանագիտության մագիստրոս (ruzanna.gasparyan@ysu.am)

Ներկայացվել է 19.11.2021
Գրախոսվել է 22.11.2021
Ընդունվել է տպագրության 30.11.2021